ըստ այնմ խորհիմք. ոչ հաճեցաւ նա՝ այլ ստիպէր սպասել։ Եհաս թղթաբերն 'ի Դամասկոսէ ('ի 4 Յուլիսի), այլ ոչ ինչ յայտնեցին առ ժամն. Հայք դիմեցին առ Մուվէլլայն իմանալ ինչ, և նա ասէ՝ ստուգեցէք 'ի Դատաւորէն, զի յառաջագոյն ասացի ձեզ գրել 'ի Կոստանդինուպոլիս, դուք ոչ գրեցիք և զիս արգելիք 'ի գրելոյ, գնացէք ուրեմն հոգալ զգործն ձեր։ Յետ աւուրց ինչ փոքու իմն յայտնէր Դատաւորն զմիտ գրոյն չլինիլ ձեռնամուխ 'ի գործն Մենդեան եւ Աստուածածնի ըստ առաջադրութեան Յունաց, եւ սպասել Նորոյ հրամանի Արքային։ Հայք ասեն՝ դու զի՞նչ ասես վասն այսր. Դատաւորն՝ կամէի կատարել զգործն ձեր և շահիլ 'ի ձէնջ եւս, այլ զի՞նչ ասացից՝ Բդեշխն այնպէս գրեալ է, որպէս առ գործակալն։ Գնացին Հայք առ Ոստիկան Կուսակալին, և նա առ զայրոյթ սրտին չկամէր պատասխանել և կամ յայտնել ինչ, այլ ասէր թէ՝ յետ ընթեռնլոյ զգիրն՝ պատասխանի զարմացեալ ընդ գործս Բդեշխին. զի յետ տալոյ Նորա կնքով իւրով քանիցս հրամանագիր, և ինձ եւս առանձին՝ կատարել զգործն ըստ մտաց հրովարտակին, այժմ զի՞ երեւ նմա, որ զհակառակն գրէ. սակայն այս հարուած յայլմէ ումեքէ է, զի ինքն ոչ առնէ այսպէս, այլ մի երկընչիք զի խնդիրս այս դարձեալ լուծանի 'ի Դամասկոս, և ոչ անկանի 'ի Կոստանդինուպոլիս, զի նախատինք են նմա, և այլ սոցին նման բանք։ Մատեան ապա առ Նուրի Էֆէնտի, և թախանձանօք ետուն ընթեռնուլ նմա զգիր Կուսակալին, որ ունէր օրինակ զայս. « Ցոյնք գրեալ են առ իս թէ 'ի դատին Կոստանդինուպոլսոյ ոչ է լեալ դատաստան ինչ վասն Բեթղեհէմի և Աստուածածնի, և չունին գիր ինչ 'ի Պատրիարքէն և յազգէն իւրեանց վասն այնց խնդրոց, որք տեղեակք էին դատին. նմին իրի չհամարձակին Ցոյնք զսեփհական և զբաժանորդ տեղիս յանձնել, և դուք եւս թողեալ զգործն այնպէս 'ի վիճակի իւրում՝ գրեցէք Իլամ և հարցումն 'ի Դուռն, և 'ի դալստեան Նորոյ հրամանի ըստ այնմ գործեցէք »։ Նուրի Էֆէնտի արար նմա պատասխանի այսպէս, « Դուք յառաջագոյն հմուտ գոլով մտաց Արքունի գրոց՝ գրեցիք քանիցս գիր հրամանի վասն գործադրութեանց նոցին, իսկ որովհետեւ